Սոցիալ բնապահպանական ռիսկերի քաղաքականություն

Մարդկային հասարակության կարևորագույն խնդիրներից են բնության մեջ գոյություն ունեցող էկոլոգիական օրենքների իմացության հիման վրա բնության խելամիտ օգտագործումն ու պահպանումը: Մարդկության տունը Երկիր մոլորակն է, որն այսօր խնամքի և պահպանության կարիք ունի: Սակայն հենց մարդկությունն է, որ իր գործունեությամբ աղտոտում է բնական միջավայրը, դարձնելով այն պակաս նպաստավոր, իսկ առանձին դեպքերում էլ աննպաստ և ուղղակիորեն վտանգավոր մարդկանց համար:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն, ձգտելով զսպել, որոշ դեպքերում էլ նվազեցնել սոցիալական և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների ի հայտ գալու հնարավոր ռիսկերը, 2023 թ.-ի մարտի 22-ին վերամշակեց արդեն իսկ գործող քաղաքականությունը սոցիալական և շրջակա միջավայրի բնապահպանական ռիսկերի կառավարման վերաբերյալ, որի շնորհիվ բանկը շարունակում է արդյունավետ կառավարել իր կողմից ֆինանսավորվող գործարքների հետևանքով բնության և մարդկության վրա հնարավոր բացասական ազդեցությունների ռիսկերը:

Բանկը համագործակցում է մի շարք միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ, որոնց հետ համատեղ մշակել ու ներդրել է Սոցիալական և բնապահպանական ռիսկերի կառավարման համակարգը, ինչպես նաև որդեգրել միջազգային փորձն ու հմտությունները:

Բանկն ունի **Անընդունելի վարկավորման ոլորտների (ԱՎՈ) ցանկ**, որոնց չի ֆինանսավորում՝ Բանկի և միջազգային ստանդարտներին համապատասխան:

1. Գործունեություն, որը ենթադրում է վնասակար կամ հարկադիր աշխատանքի /վնասակար մանկական աշխատանքի ձևեր, կամ այնպիսի պրակտիկա, որը թույլ չի տալիս աշխատակիցներին օրինականորեն կիրառել իրենց համախմբվելու կամ կոլեկտիվ բանակցություններ վարելու իրավունքները:
2. Չկապակցված ասբեստե մանրաթելերի կամ ասբեստ պարունակող իրերի արտադրությունը, իրացումը կամ կիրառումը:
3. Գործունեություն, որն արգելվում է ռեսուրսների կենսաբազմազանության կամ մշակութային ժառանգության պաշտպանության մասին ՀՀ օրենսդրությամբ կամ միջազգային կոնվենցիաներով:
4. ՊՔԲ-ների (պոլիքլորացված բիֆենիլների) արտադրությունը կամ վաճառքը:

5. Այնպիսի դեղագործական իրերի, պեստիցիդների և հերբիցիդների կամ այլ վտանգավոր նյութերի արտադրությունը կամ վաճառքը, որոնք միջազգային պայմանագրերով արգելվում են, կամ ենթակա են շրջանառությունից աստիճանական դուրսբերման:
6. Օզոնը քայքայող այն նյութերի արտադրությունը կամ վաճառքը, որոնք միջազգային պայմանագրերով ենթակա են շրջանառությունից աստիճանական դուրսբերման:
7. Կենդանի բնության կամ դրան առնչվող այնպիսի ապրանքների վաճառքը, որոնք կարգավորվում են ՎՏԱՄԿ-ի (Վտանգված Տեսակների Առևտրի Մասին Միջազգային Կոնվենցիա) կողմից:
8. Ձկնորսություն ջրային միջավայրում 2.5 կմ-ից երկար դրիֆտերային ցանցերով:
9. Նավթի կամ այլ վտանգավոր նյութերի տեղափոխումը այնպիսի տանկերներով, որոնք չեն համապատասխանում ՄԾԿ (Միջազգային Ծովային Կազմակերպություն) պահանջներին:
10. Ապրանքի առևտուր առանց ներկրման, արտահանման կամ տրանզիտային համապատասխան երկրների արտահանման և ներկրման լիցենզիաների կամ համապատասխան երկրներից տեղափոխման թույլտվության այլ վկայականների:
11. Գործունեության ծավալում այնպիսի տարածքներում կամ դրանց հարևանությամբ կամ ուղղությամբ, որտեղ ապրում են տեղաբնակ ժողովուրդներ և/կամ խոցելի խմբեր, այդ թվում՝ այնպիսի հողատարածքներում կամ ջրահոսքերի հարևանությամբ, որոնք օգտագործվում են գոյատևման ապահովման առաջնային գործունեության՝ ինչպես օրինակ արոտավայրերի, որսորդության կամ ձկնորսության նպատակով:
12. Գործունեության ծավալում երկրի պետական օրենքով կամ միջազգային կոնվենցիաներով պաշտպանված այնպիսի տարածքներում կամ դրանց հարևանությամբ կամ ուղղությամբ, գիտական հետաքրքրություն ներկայացնող տեղանքում, կամ հազվագյուտ/վտանգված տեսակների բնակավայրերում, տնտեսական նշանակություն ունեցող ձկնորսավայրերում և բնապահպանական նշանակություն ունեցող հասուն անտառատարածքներում:
13. Գործունեություն, որը կարող է բացասական ազդեցություն ունենալ մշակութային կամ հնէաբանական նշանակության տեղանքի վրա:
14. Գործունեություն, որը ենթադրում է հարկադրական ապաբնակեցում:

15. Գործունեություն, որը ենթադրում է գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմների (ԳՄՕ) բացթողումը բնական միջավայր և բնական միջավայր բաց թողնվելիք ԳՄՕ-ների առևտուր:
16. Միջուկային էներգիայի արտադրություն:
17. Ռադիոակտիվ նյութերի արտադրություն կամ վաճառք՝ ներառյալ ռադիոակտիվ թափոնների պահպանումը կամ մշակումը:
18. Զենքի և զինամթերքի արտադրություն:
19. Ծխախոտի արտադրություն:
20. Դրամախաղեր, խաղատներ և այլ նմանատիպ գործունություններ:
21. Որևէ ապրանք կամ գործունեություն, որի արտադրությունը կամ առևտուրը արգելված է երկրի օրենքներով կամ միջազգային կոնվենցիաներով և պայմանագրերով, կամ հանդիսանում են միջազգային արգելքի առարկա, ինչպիսիք են դեղորայք, պեստիցիդ/հերբիցիդներ, օզոնային շերտը վնասող միջոցներ, ՊՔԲ-ների (պոլիքլորացված բիֆենիլների), վայրի բնության և ֆաունայի կամ ՎՏԱՄԿ-ի (Վտանգված Տեսակների Առևտրի Մասին Միջազգային Կոնվենցիա) կողմից կարգավորվող առարկաներ:
22. Ծանր ալկոհոլային խմիչքների արտադրություն[1]:
23. Սնդիկի արտադրություն և վաճառք:
24. Վտանգավոր թափոնների վերամշակում, արտահանում և վաճառք:

Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի արդյունավետ կառավարումն ու բարելավումը վարկավորման գործընթացում և վարկի ողջ ժամկետի ընթացքում հանդիսանում է Բանկի հիմնական նպատակներից մեկը:

Բանկի համար սոցիալական և բնապահպանական ռիսկերի մշտադիտարկումը՝ գործունեության համապատասխանությունը տեղական և միջազգային ՍԲ պահանջներին,ևս առաջնային ռազմավարական հարցերից է: Բանկը շարունակաբար հետևում է ֆինանսավորվող ընկերությունների գործունեություններին՝ հատկապես միջին և բարձր սոցիալ-բնապահպանական ռիսկի դաս ունեցող ընկերություններին, որը կարգավորվում է Բանկի ներքին իրավական ակտերով:

[1] Ծանր ալկոհոլային խմիչքներ են համարվում այն խմիչքները, որոնցում սպիրտի քանակը ըմպելիքի մեջ կազմում է 45 և ավել աստիճան:
Միջին ծանրության ալկոհոլային խմիչքներ են համարվում այն խմիչքները, որոնցում սպիրտի քանակը ըմպելիքի մեջ կազմում է 20-45 աստիճան: